Ինչպես տեղեկացրել էինք, այսօրվա մամլո ասուլիսը «Ֆորպոստարտ» ընկերությունը հրավիրել է, որպեսզի առավել մանրամասն պարզաբանի, թե ինչու հետաձգվեց մարտի 6-ի՝ Իրինա Ալեգրովայի մենահամերգը: Թեև հրապարակվել էր և՛ երգչուհու ուղերձը, և՛ ընկերության հայտարարությունը, սակայն շարունակում են հնչել անհարկի մեղադրանքներ, անհեթեթ հարցադրումներ և չստուգված լուրեր:

Սկսենք նրանից, որ Իրինա Ալեգրովան Երևան է ժամանել մարտի 6-ին, ժամը 04:30-ին և արդեն իսկ վատառողջ էր, ջերմությունը 37,5 աստիճան էր: Օրվա ընթացքում դեղորայք էր ընդունում՝ հուսալով, որ ամեն ինչ կկարգավորվի: Ժամը 17:00-ին երգչուհուն ուղեկցող խումբը մարզահամերգային համալիրի դահլիճում փորձ էր անցկացնում: Կազմակերպիչները նույնպես այնտեղ էին և սպասում էին երգչուհուն: Սակայն, ժամը 17:30-ին հեռախոսազանգ ստացվեց Իրինա Ալեգրովայի համերգների պատասխանատուից, ով տեղեկացրեց, որ երգչուհու ինքնազգացողությունը կտրուկ վատացել է, ջերմությունը 39.5 աստիճան է և անհրաժեշտ է բժշկական օգնություն: Անմիջապես հրավիրվեցին համապատասխան բժիշկներ «Նաիրի» բժշկական կենտրոնից, ովքեր էլ արձանագրեցին, որ երգչուհու մոտ սուր վիրուսային ինֆեկցիա է՝ իր բարդություններով: Համերգը հետաձգելու մասին որոշումը կայացնելուց անմիջապես հետո Իրինա Ալեգրովան տարածեց իր ուղերձը, որտեղ նշում էր. «Իմ արվեստի սիրելի երկրպագուներ, ես արեցի ամեն ինչ, որ մեր հանդիպումը կայանա, սակայն հանգամանքները մեզանից ուժեղ գտնվեցին: Ես շատ վատառողջ եմ և այսօր բեմ դուրս գալ չեմ կարող, սակայն համերգն անպայման կկայան, խնդրում եմ պահպանել տոմսերը - Ձեր Իրինա Ալեգրովա»:

«Ֆորպոստարտ» ընկերությունը ևս պաշտոնական հաղորդագրություն տարածեց՝ տեղեկացնելով, որ համերգը կկայան ապրիլի 6-ի, որ բոլոր տոմսերը ուժի մեջ են:

Ահա այն ամենը, ինչ եղել է իրականում: Հարգելի լրագրողներ, վստահեցնում եմ, որ սա շահարկման առարկա դարձնելու առիթ չէր, քանի, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհում հասարակության կողմից համարժեքորեն ընդունված պրակտիկա է և՛ համերգների հետաձգումը և՛ նույնիսկ չեղյալ հայտարարել, որովհետև ոչ ոք ապահովագրված չէ հիվանդությունից կամ աստված մի արասցե, դժբախտ պատահարից, այդ թվում և հայտնիները:

Այսօրվա ասուլիսի մյուս կարևոր նպատակն այն է, որ «Ֆորպոստարտ» ընկերությունը տեղեկացնում է, որ ապրիլի 6-ի համերգը ևս հետաձգվում է: Դա պայմանավորված է Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում՝ ապրիլի 22-23-ին «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» միջազգային գլոբալ հասարակական, քաղաքական ֆորումը Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում անցկացնելու հանգամանքով: Քանի որ այս միջոցառման համար համերգային դահլիճի արտաքին տեսքն ամբողջությամբ փոխվելու է, տեղադրվելու են բավականին մասշտաբային թեմատիկ դեկորացիաներ, իսկ դա ահռելի աշխատանք է, ժամանակատար՝ և՛ տեղադրելու և՛ ապամոնտաժելու առումով (մոտավոր հաշվարկներով նշված միջոցառման դեկորացիաները ապամոնտաժված կլինեն մայիսի 15-ին), ուստի Իրինա Ալեգրովայի համերգը հնարավոր կլինի կազմակերպել միայն մայիսի 23-ին: Թեև երգչուհու համերգային շրջագայությունների գրաֆիկը սովորաբար նախատեսվում է առաջիկա մեկ տարվա կտրվածքով, իսկ Իրինա Ալեգրովան, ինչպես գիտեք, ամենապահանջված արտիստներից է, և նրա գրաֆիկը բավականին հագեցած է, նա ըմբռնումով մոտենալով ստեղծված իրավիճակին իր համերգների ժամանակացույցը հարմարեցրեց այնպես, որ մայիսի 23-ի լինի Երևանում և իր երկրպագուներին հրավիրի հանդիպման՝ ժամը 19.00-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզամահամերգային համալիրում:

Այսօր մենք կդիտենք նաև Իրինա Ալեգրովայի տեսաուղերձը:

«Ֆորպոստարտ» ընկերությունը մեկ անգամ ևս ներողամտություն է հայցում համերգի հետաձգման համար և ամենայն պատասխանատվությամբ վստահեցնում, որ համերգը մայիսի 23-ին անպայման կկայանա, ընդ որում՝ հատուկ ծրագրով: խնդրում ենք պահպանել ձեր տոմսերը, դրանք ուժի մեջ են: Նրանց, ում ինչ-ինչ պատճառներով հարմար չի լինի ներկա գտնվել մայիսի 23-ի համերգին, տեղեկացնում ենք, որ կարող են էլեկտրոնային հաղորդագրությամբ «Ալեքս էվենթ» ընկերությանը տեղեկացնել տոմսերը վերադարձնելու ցանկության մասին՝ Ticketforpostart@mail.ru հասցեով, իսկ մենք կաշխատենք ողջամիտ ժամկետներում դիտարկել և պատասխանել:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ տոմսարկղերը, որտեղ վաճառվել են Իրինա Ալեգրովայի համերգի տոմսերը, ոչ մի պատասխանատվություն չեն կրում համերգի չկայացման հարցում. դրանք ընդամենը տոմսերը իրացնող միջնորդ կազմակերպություններ են և վաճառված տոմսերի գումարներն անմիջապես փոխանցում են համերգի կազմակերպչին: Ուստի նրանք չեն տնօրինում տոմսերի վաճառքից գոյացած գումարներին և չեն կարող հետ ընդունել տոմսերը և վճարել: Այդ գումարների պատասխանատուն «Ֆորպոստարտ» ընկերության երևանյան ներկայացուցիչ «Ալեքս էվենթ» ընկերությունն է: Տոմսերի վերադարձի գործընթացի կազմակերպումը բարդացնում է այն հանգամանքը, որ Հայաստանում չի գործում տոմսերի վաճառքի կենտրոնացված էլեկտրոնային համակարգ, ինչը թույլ չի տալիս հետևել տոմսերի շարժերին՝ թե, որ տոմսարկղում է վաճառվել, կամ, որ կազմակերպության կողմից է կոլեկտիվ հայտ ներկայացվել և այլն: Հորդորում և խնդրում ենք ձեզ տոմսարկղերի աշխատակիցներին ոչ մի պահանջ չներկայացնել և չահաբեկել: Այո, ցավոք եղել են և նման դեպքեր: Մենք խոստանում ենք կրկնվելու դեպքում դիմել իրավապահներին:

Այս օրերին հնչած ասեկոսեներից կուզեի անդրադառնալ, թերևս, ամենանուրբ հարցին, որն ուղղակիորեն փորձում է վարկաբեկել «Ֆորպոստարտ» ընկերության հեղինակությունը: Խոսքը նրա մասին է, թե համերգը չի կայացել երգչուհու հոնորարը չվճարելու պատճառով: Նախ նշեմ, որ շոու բիզնեսում գործում են հստակ մոտեցումներ. յուրաքանչյուր համերգի շուրջ պայմանավորվածություն ձեռք է բերվում համերգի կայացման օրվանից 6 ամիս առաջ և հենց այդ պահին էլ վճարվում է հոնորարի 50 %-ը, մյուս 50 %-ը վճարվում է համերգից 1 ամիս առաջ, ուստի կարծում եմ նման անհիմն լուրերը վնասում են միայն տվյալ լրատվամիջոցների հեղինակությանը: Երկրորդ, «Ֆորպոստարտ» ընկերությունը շուրջ 25 տարի է աշխատում է այս ոլորտում, և նրա գործունեության երկար տարիների ընթացքում համերգի չկայացման կամ տոմսերի գումարների չվերադարձման դեպք չի արձանագրվել, նրա ոչ մի ձեռնարկ չի ձախողվել: Մեզ համար ամենակարևորը հասարակության շրջանում և մեր պրոֆեսիոնալ ոլորտում ընկերության բարի համբավի պահպանումն է:

Մինչ ձեր հարցերին պատասխանելը, կուզեի հորդորել բոլորին զերծ մնալ անհարկի, անհիմն մեղադրանքներից: Ի վերջո, մենք քաղաքակիրթ աշխարհի մի մաս ենք, և մեզ հարիր չէ նման վայրի արձագանքը մի հարցի, որն ընդամենը պայմանավորված է մարդկային գործոնով. Մարդը հիվանդացել է, հասկանում եք, ուրիշ ոչ մի անդառնալի բան տեղի չի ունեցել: Եկեք առողջություն մաղթենք նրան, թեկուզ ուշացումով:

Շնորհակալություն

www.forpostart.ru
www.irinaallegrova.ru